Եղիշե Չարենց

Միայն Քեզ համար

Արմենուհի Տիգրանյանին

Մրսած մի եղեգի նման
Կարոտս անսկիզբ ու անծայր
Տխուր դողդողում է հիմա,
Երգում է միայն քեզ համար:
Երգում է անընափոփ ու տխուր
Կարոտս անմայր մի մանուկ
Իմ երգը աչքերիդ պես խոր
Ու թույլ ձեռքերիդ պես անօգ:
Բայց դու կարոտիս հանդեպ
Ինչո՞ւ ես լռել, շվարել,
Ինչո՞ւ է լռությունը անդեմ
Շարել իր պատնեշները քարե:
Երգի՛ր, զրընգա՛, զնգա՛,
Նետի՛ր երգիդ վանկը հետին
Անփույթ ժպիտի պես մանկան
Քո թույլ, հոգնաբեկ պոետին:
Մենակ ես ընկել եմ ճամփա,
Ուսիս՝ հոգնությունը իմ ծեր,
Նետի՛ր արևի մի փայլ

Դեպի իմ խավարը անծիր...

8. III. 1920